ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Զրարբի, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 75-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրարբի համայնքի 2017-2021թվականների հնգամյա զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻՆԱ
7. ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

Համայնքի ղեկավար ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար _____ Ղ.Ղազարյան

հաստատվել է՝ համայնքի ավագանու
2016 թ. դեկտեմբերի 16-ի
N 75-N որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

2 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 4

3 ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

4 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....15

5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ, -ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ 16

6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....16

7 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....17

8 ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.....18

9 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ.....20

10 ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓԱՓԱԳԻՐ՝ ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ 28

11. ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ՀՀԶԾ-ՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ.....31

12 ՀՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 47

13 ՀՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ..... 47

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ 48

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի 2017-2021 թթ. համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ ՀՀԶԾ) ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները:

Համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոխված ՀՀ Սահմանադրության 181-հոդվածի, ՏԻՄ-ը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Ելնելով վերոնշյալից՝ մշակվել է համայնքի զարգացման հնգամյա ծրագիր, նախկին քառամյայի փոխարեն: ՀՀԶԾ-Ն կազմվել է հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառվարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կոմից որպես ուղեցույց տրամադրված<<Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանություն>> ձեռնարկը:

ՀՀԾԶ-ն մշակելիս հաշվի է առնվել համայնքում առկա ռեսուրսները (ակտիվները), տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և հիմնական նպատակների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական,սոցիալական,շրջակա միջավայրի և այլ գործոններ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զրարբի համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ ՀՀԶԾ, մշակվել է համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի կողմից, բնակիչների, ավագանու անդամների, և այլ շահագրգիռ կողմերի հետ մեկտեղ : Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նպատակաուղղված է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը և համայնքի տեսլականի իրականացմանը: ՀՀԶԾ-ով սահմանվում է համայնքի ֆինանսական կառավարման հիմնական քաղաքականությունը գալիք հինգ տարիների համար: Այն կդառնա ուղեցույց համայնքային ծառայությունների մակարդակի և որակի պահպանման, խթանման և բարձրացման համար:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Գալիք տարիների համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը, համայնքապետարանի աշխատանքները լինելու են առավել բաց, բնակիչները հնարավորություն են ունենալու սպառիչ տեղեկանալ համայնքապետարանի գործունեության մանրամասներին:
- Իրականացնել ծրագրեր որոնք կնպաստեն համայնքում կրթություն, մշակույթի և սպորտի բնագավառների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման աշխատանքների բարելավմանը:
- Իրականացնել միջհամայնքային և համայնքային նշանակություն ունեցող ճանապարհների վերանորոգմանը և բարելավմանը ուղղված աշխատանքներ

- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:
- Ձրարբին պետք է դառնա մաքուր, կանաչ ու բարեկարգ, աշխատանքի ու կարգուկանոնի, հարմարավետ ու ապագայի համայնք, որտեղ ապահովված կլինեն հասարակության յուրաքանչյուր անդամի անվտանգ ու արժանավայել կյանքը, բավարարված կլինեն սոցիալական ապահովության կարիք ունեցող բնակիչների նվազագույն պահանջները:
- Կանխել հետագա խնդիրների առաջացումը:

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ, քանի որ դրանից է կախված համայնքի հետագա զարգացումը:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3. 1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրարբի համայնքը գտնվում է Արարատյան դաշտավայրում ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա:

Իր ժողովրդի պատմության տարբեր ժամանակներն այնպես լռելյայն վկայագրող Արաքս գետի ձախափնյա մասում ինքնավստահորեն վեր խոյացող հայոց այս շենը բավականին երիտասարդ է ընդամենը 42 տարեկան : Հիմնադրվել է 1974 թվականին , Զրառատի թռչնաֆաբրիկայի / ներկայիս «Արաքս թ/ֆ»-ի / հենքի վրա: Գյուղի հիմնադրման տարեթիվը համընկնում է խորհրդային միությունում իր հզորության ծավալներով երկրորդը համարվող Զրառատի թռչնաֆաբրիկայի ստեղծման տարեթվին, որովհետև գյուղը այդ տարիներին որպես բանվորական ավան աշխատողներին տեղավորելու նպատակով ֆաբրիկայի հետ միաժամանակ գոյացավ: Սկզբնական շրջանում ավանը Զրառատ գյուղի հետ միացյալ էր ու կոչվում էր Բանավան: 1991-1992 թվականներին այն առանձնացավ Զրառատից, իր վարչական տարածքն ունեցավ և անվանակոչվեց Զրառատի թ/ֆ: Իսկ արդեն 2005 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ անվանափոխվեց ու կոչվեց Զրարբի:

Զրարբի համայնքը գտնվում է մարզկենտրոնից 35 կմ հեռավորության վրա: Գյուղի կենտրոնում է գտնվում գյուղապետարանի շենքը,մշակույթի տունը , բուժկետը , մանկապարտեզի և դպրոցի շենք:

Կլիման ձմռանը լինում է ցուրտ, ամռանը՝ շոգ:

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ –ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը վերջին տարիներին փոքր ինչ բարելավվել է: Բարձրացել է հարկերի հավաքագրման ցուցանիշը, 2010 թվականից սկսած համայնքը հողի հարկի ապառք չունի, իսկ 2014 թվականից սկսած շենքերի և շինությունների գծով ապառքներ չկան: Համայնքային բյուջեն կատարվում է 100 և ավելի տոկոսով: Սակայն վերջինս հնարավորություն է տալիս միայն բարելավել համայնքային ենթակառուցվածքների վիճակը: Ընտանիքների միջին եկամուտը ասական կազմում է 100-ից 120 հազար դրամ: Բնակչության մեծ մասը աշխատում է <<Արաքս թռչնաֆաբրիկա>> ՓԲԸ-ում, ինչի շնորհիվ համայնքում ցածր է գործազրկության մակարդակը և համայնքից արտագաղթը քիչ է:

3.3.Ժողովրդագրություն

Համայնքի բնակչության թիվը՝ առկա – 1641, հաշվառված – 1831 այդ թվում՝

կանայք – 886

տղամարդիկ – 755

Բնակչության տարիքային կազմը՝

0-6 տարեկան – 136

7-17 տարեկան – 285

18-65 տարեկան – 1181

65 և բարձր – 39

Սոցիալական կազմը, այդ թվում՝

թոշակառուներ – 158

միակողմանի ծնողազուրկ երեխաներ –15

հաշմանդամներ – 35, որից՝, 6-15 տարեկան- 4,

ընտանիքների (ծխերի) թիվը – 305

«Փարոս» ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ – 34

3.4. Հողային ֆոնդ

Ջրարբի համայնքը թերևս միակ համայնքներից է, որտեղ հողերի սեփականաշնորհման գործընթաց տեղի չի ունեցել: Բնակիչներն ունեն միայն բնակարաններին կից տնամերձ հողամասեր, մեկ տնամերձ հողաբաժնի չափը կազմում է 800ք/մ

Համայնքի վարչական տարածքը 281.92 հա է, այդ թվում՝

բնակարանային ֆոնդ – 46.85 հա

արտադրական նշանակության հողեր – 177.25 հա

գյուղատնտեսական նշանակության հողեր – 50.52 հա

Էներգետի կապի, տրանսպորտի, կապի,կոմունալ- 1 հա

ջրային ֆոնդեր – 2.17 հա

Հատուկ պահպանվող տարածքների - 4.13 հա

3.5 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քանի որ Ջրարբի համայնքում հողերի սեփականաշնորհման գործընթաց տեղի չի ունեցել, այդ իսկ պատճառով համայնքում հողագործությունը զարգացման մեծ ծավալների չի հասնում, ազգաբնակչության հիմնական մասը աշխատում է «Արաքս» թռչնաֆաբրիկայում, մի մասն էլ զբաղված է գյուղատնտեսությամբ՝ ջերմոցային կուլտուրաների մշակմամբ և անասնապահությամբ:

Խոշոր եղջերավոր անասուններ 57, որից կովեր՝ 36

Խոզեր 127

Ոչխարներ 150

Այծեր 4

Թռչուններ 482

3.6 Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ջրարբիի համայնքապետարանի աշխատակազմը ունի հետևյալ կառուցվածը

Հայեցողական պաշտոն՝ համայնքի ղեկավարի տեղակալ

1.2 Համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 1-ին ենթախումբ

1. Արմավիր մարզի Ջրարբի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

2.3 Համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 2-րդ ենթախումբ

1. Արմավիր մարզի Ջրարբի համայնքապետարանի գլխավոր մասնագետ

3.1 Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 1-ին ենթախումբ

1. Արմավիր մարզի Ջրարբի համայնքապետարանի առաջատար մասնագետ

3.2 Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 2-րդ ենթախումբ

1. Արմավիր մարզի Ջրարբի համայնքապետարանի 1-ին կարգի մասնագետ
2. Արմավիր մարզի Ջրարբի համայնքապետարանի 1-ին կարգի մասնագետ

Տեխնիկական սպարարկում՝ պահակ, հավաքարար:

Համայնքի ենթակառուցվածքներն են՝

- ✓ Ջրարբի համայնքի <<Ջրարբի համայնքի մանկապարտեզ >> ՀՈԱԿ
- ✓ Ջրարբի համայնքի <<Ջրարբիի մշակույթի տուն >> ՀՈԱԿ

Ջրարբիի համայնքապետարանի և նրա ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 23 աշխատակցից:

Համայնքի ավագանու անդամների թիվը - 7

Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը

Համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝

Աղյուսակ 1

ՀՀ	Հաստիքի անվանումը	Հաստիքայի ն միավորը	Աշխատակիցներ ի թվաքանակը	Հավելավճար ի չափը	Պաշտոնային դրույքաչափը
1	Համայնքի ղեկավար	1	1	0	230000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	0	138000
3	Աշխատակազմի քարտուղար	1	1	0	163000
4	Գլխավոր մասնագետ	1	1	0	129000
5	Առաջատար մասնագետ	1	1	0	128000
6	1-ին կարգի մասնագետ	2	2	0	116000
7	Պահակ	1	1	5152	72752
8	Հավաքարար	1	1	5152	72752
	Ընդամենը	9	9	10304	1049504

<< ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12

Աղյուսակ 2

ՀՀ	Հաստիքի անվանումը	Հաստիքայի ն միավորը	Աշխատակիցներ ի թվաքանակը	Հավելավճա րի չափը	Պաշտոնային դրույքաչափը
1	Մանկապարտեզի տնօրեն	1	1	0	93000
2	Հաշվապահ	0.5	1	0	45000
3	Տնտեսվար	0.5	1	0	45000
4	Բուժքույր	0.5	1	0	45000
5	Դաստիարակ	2.24	4	0	52500
6	Դայակ	2	2	5152	72752
7	Խոհարար	1	1		72752
8	Պահակ	1	1		72752
	Ընդամենը	8.74	12	10304	498756

<< ՋՐԱՐԲԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ >> ՀՈԱԿ-ի

Աղյուսակ 3

ՀՀ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Աշխատակիցների թվաքանակը	Հավելավճարի չափը	Պաշտոնային դրույքաչափը
1	Մշակույթի տան տնօրեն	1	1	5152	72752
2	Հավաքարար	1	1	5152	72752
	Ընդամենը	2	2	5152	72752

3.7 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրարբի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ: Վերջին տարիներին տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել էր, սակայն 2014 թվականից սկսած վերանորոգվել են մանկապարտեզի շենքը և մշակույթի տունը ինչի հետևանքով համայնքին պատկանող գույքի ֆիզիկական վիճակը բարելավվել է: Համայնքը մինչև օրս չունի տիպային դպրոցի շենք, իսկ համայնքի բյուջեի միջոցներով հնարարվոր չէ դպրոցի նոր տիպային շենք կառուցել:

Ստորև բերվում է համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը՝

1. համայնքի վարչական շենք,
2. մշակույթի տուն,
3. Մանկապարտեզ,
4. բուժկետ,
5. խմելու ջրի խորքային հորեր,
6. ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ,
7. ներհամայնքային գերեզմանատուն,
8. հանրակացարան,
9. կաթսայատուն,

3.8 Առողջապահական հիմնարկներ

Զրարբի համայնքում գործում է մեկ բուժ կետ, քանի որ նախկին բուժկետի շենքային պայմանները չէին համապատասխանում չափանիշներին 2007 թվականին << ԱՐԱՔՍ Թ/Ֆ>> ՓԲԸ հիմնադիրների կողմից բարեգործական հիմունքներով կառուցվեց նոր բուժկետ: Չնայած համայնքը ունի վերանորոգված բուժկետ, բայց չունի բժիշկ: Համայնքի ազգաբնակչությանը սպասարկում է Զրառատի բուժ ամբուլատորիայի բժիշկը, ամսական երկու անգամ այցելում է համայնք, կատարում է հիվանդների ընդունում և երեխաների պրոֆիլկտիկ պատվաստումներ, սակայն բնակիչների մեծ մասը դժգոհում է, որ համայնքը չունի բժիշկ:

3. 9 Բնության և շրջական բնական միջավայրի պահպանություն

Զրարբի համայնքը ապահովված է խմելու ջրով, ջրի աղբյուր են հանդիսանում համայնքում առկա 8 խորքային հորերը, որոնցից 7-ն են գործում: Խորքային հորերը ցանկապատված են և ունենա սանիտարապաշտպանական գոտիներ: Խմելու ջրի ջրամատակարարման համակարգը գտնվում է լավ վիճակում , նվազագույնին են հասցված ջրի կորուստները:

Ջրամատակարարումը համայնքում 18 ժամյա է:

Համայնքը չունի ոռոգման ջրի կենտրոնացված համակարգ: Համայքում ավարտվել են կոյուղագիծ անցկացման աշխատանքները, որով լուծվել է ջրահեռացման խնդիրը: Տնային տնտեսությունների 90%-ը միացված են կենտրոնական կոյուղագծին:

Շրջակա միջավայրի մաքրությունը պահպանելու համար յուրաքանչյուր շաբաթ, շաբաթական երկու անգամ, համայնքում իրականացվում են աղբահանման աշխատանքներ, որի արդյունքում մաքրվել են համայնքի փողոցներն ու մայթեզրերը: Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպվում են համայնքապետարանի կողմի և աշխատանքների դիմաց վարձատրությունն ամբողջությամբ կատարվում է համայնքապետարանի միջոցներով:

Համայնքում շրջակա միջավայրը աղտոտող արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

3. 10 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է հետևյալ երթուղին՝ Էջմիածին –Ապագա- Զրարբի , Համայնքի տարածքով անցնում են Էջմիածին –Մարգարա-Երևան, Արմավիր-Երևան երթուղիները:

Ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը 2 կմ է, որոնց ծածկույթը հիմնականում գրունտային են և գտնվում են անբարեկարգ վիճակում, կարք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցման: Ամեն տարի կատարվում են ներհամայնքային ճանապարհների հարթեցման աշխատանքները:

Համայնքից մինչև մոտակա գյուղմթերքի վաճառքի շուկա ճանապարհի հեռավորությունը կազմում է 5 կմ:

3. 11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ջրաբերի համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց՝ 262 աշակերտներով, սակայն համայնքը չունի դպրոցի տիպային շենք: Դասերը կազմակերպվում են համայնքային սեփականություն հանդիսացող նախկին մանկապարտեզի մասնաշենքում:
Ուսուցիչների թիվը կազմում է 29-ն է:
Համայնքում գործում է համայնքային ենթակայության մեկ մանկապարտեզ, որն ունի երկու խումբ: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը 65-ն է, աշխատողների թիվը՝ 12: Մանկապարտեզի շենքը կապիտալ վերանորոգված է, ունի ջեռուցման համակարգ:

3. 12 ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Ջրաբերի համայնքն ունի մշակույթի տուն: Երկար տարիներ Մշակույթի տունը գտնվում էր անբարենպաստ պայմաններում և չէր շահագործվում: 2014 թվականից համայնքի ֆինանսական միջոցներով՝ սկսվեցին Մշակույթի տան հիմնովին վերանորոգման աշխատանքները: Վերանորոգումը ավարտվեց 2015 թվական, որից հետո բացվեցին տարբեր պարի, սպորտի և շախմատի խմբակներ, համայնքի թվով 150 երեխաներ հաճախում են տարբեր խմբակներ: Համայնքը սկսել է ակտիվ մշակութային կյանքով ապրել: Մշակույթի տանը պարբերաբար կազմակերպվում և նշվում են կրթական. մշակութային և սպորտային միջոցառումներ:
Համայնքում անցկացվում են շախմատի և ֆուտբոլի մրցաշարեր: Համայնքը ունի ֆուտբոլի երիտասարդական թիմ, ինչպես նաև <<Մարտեր առանց կանոնների>> միջազգային սպորտաձևի մարզիկների թիմ:

3. 13 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աղյուսակ 4

Հ/Հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Մակերես բ/մ	Ընդհանուր վիճակի գնահատական	Այլ նշումներ
1	Ջրաբբիի մշակույթի տուն	Պ.Սևակ 5	1978		գերազանց	Վերանորոգվել է 2015թ
2	Մանկապարտեզի շենք	Հ.Թումանյան փ 12	1979		գերազանց	Վերանորոգվել է 2015թ
3	Համայնքապետարան	Պ.Սևակ 7	1979		գերազանց	Վերանորոգվել է 2013
4	Բուժ կետ	Պ.Սևակ 7/1	2007		Լավ	2007
5	Հանրակացարան	Ղ.Աղայան 4շա	1978		Լավ	Վերանորոգվել է ընտանիքի կողմից

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

2017-2021 թթ –ի ընթացքում համայնքը նախատեսում է լայնորեն համագործակցել հանրապետական , մարզային, միջհամայնքային կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց հետ:

Քանի որ Ջրաբի համայնքը չունի դպրոցական շենք, այդ իսկ պատճառով նախատեսվում է պետական միջոցներով համայնքում կառուցել դպրոցի շենք:

Պետական ծրագրի շրջանակներում նախատեսվում է համայնքում հետնյոտնային շարժի կարգավորման համար տեղադրել արագաչափ, կամ նախազգուշացնող նշաններն:

2017-2021 թվականների ընթացքում մարզային ծրագրերով համայնքում նախատեսվում է իրականացնել ներհամայնքային, միջհամայնքային ճանապարհների կառուցման, վերանորոգման աշխատանքներ:

Մարզային ծրագրով նախատեսվում է համագործակցել պարարտանյութերի և հեղուկ վառելիքի ձեռքբերման ուղղությամբ:

5.ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ -ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Ջրաբի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող թերևս միակ և հիմնական գործոնը դպրոցի շենքը չունենալն է:

6. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

6.1 ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Ջրաբբի համայնքի ուժեղ կողմ է հանդիսանում՝

- Հանրապետությունում իր հզորության ծավալներով առաջտարը համարվող <<Արաքս թռչնաֆաբրիկա>> ՓԲԸ-ն, որն էլ բնակչության մեծ մասին ապահովվում է մշտական աշխատանքով:
- Համայնքում կա շուրջօրյա ջրամատակարարում:
- Համայնք 80%-ը գազաֆիկացված է,
- անցկացված են կոյուղագծերը,
- փողոցները լուսավորված են,
- շաբաթական 2 անգամ իրականացվում է աղբահանություն:
- Համայնքում գործում է վերանորոգված մշակույթի տուն,
- Գործում է մանկապարտեզ
- Սեփական եկամուտների հավաքագրումը կատարվում է 100%-ով:

6.2 ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Ջրաբբի համայնքի թույլ կողմերն են՝

- Դպրոցական շենքի բացակայությունը
- Ճանապարհների անբարեկարգ վիճակը
- Համայնքում հողերի սեփականաշնորհում տեղի չի ունեցել
- Գյուղտեխնիկայի բացակայություն
- Ժամանցային վայրերի բացակայություն

7. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Համայնքի տեսլականն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, մշակութային կյանքը , հանգստի պայմանները: ՀՀՀԶԾ-ի հիմնական նպատակներից մեկը համայնքը դարձնել բարեկարգ, բարեկեցիկ :
Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակներն են՝

Նախատեսվում է 2017-2021 թթ կատարվելիք աշխատանքների միջոցով , համայնքի կայուն զարգացումը ապահովելով Ջրաբբի համայնքում իրականացնել հետևյալ ծրագրերը

- Ջրաբբի համայնքում կառուցել կանաչապատ զբոսայգի.
- Համայնքապետարանի շենքի 2-րդ հարկի վերանորոգում, որը կօգտագործվի որպես մանկական խմբակների կամ երիտասարդների ժամանցի կենտրոն.
- Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում.
- Համայնքապետարանի, մշակույթի տան հարակից տարածքների ասֆալտապատում
- Մշակույթի տան գույքի ձեռք բերում.
- Մանկապարտեզի տարածքում խաղահրապարակի կառուցում.
- Մանկապարտեզը վերազինել գույքով.
- Խմելու ջրի գլխավոր ջրագծի վերանորոգում 20% .
- Կոյուղագծի խողովակների վերանորոգում.
- Դպրոցի շենքի վերանորոգում.
- Համայնքից դեպի Էջմիածին-Մարգարա մայրուղի տանող համայնքի վարչական տարածքում արագաչափի տեղադրում.
- Կանաչապատել համայնքապետարանի , մշակույթի տան, մանկապարտեզի և դպրոցի հարակից տարածքները.
- Մշակույթի տանը բացել նոր խմբակներ, որոնք կնպաստեն ազգային արժեքների պահպանմանը.
- Համայնքի գլխավոր հատակագծի գծագրում:

8. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՀՀԶԾ ընդգրկվելու համար առաջարկվող ծրագրերի ցանկ

Աղյուսակ 5

h/h	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը, ֆինանսավորման աղբյուրը (հազ.դրամ)
1	Համայնքում կանաչապատ զբոսայգու կառուցում	3000,0
2	Համայնքապետարանի շենքի 2-րդ հարկի վերանորոգում	4000.0
3	Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	120000,0
4	Համայնքապետարանի, մշակույթի տան հարակից տարածքների ասֆալտապատում	18000.0
5	Մշակույթի տան գույքի ձեռք բերում	2500.0
6	Մանկապարտեզի տարածքում խաղահրապարակի կառուցում.	1200.0
7	Մանկապարտեզը վերազինել գույքով	2500.0
8	Խմելու ջրի գլխավոր ջրագծի վերանորոգում 20% /տարեկան/	5000.0
9	Կոյուղագծի խողովակների վերանորոգում	1200.0
10	Դպրոցի շենքի վերանորոգում	480000.0
	Համայնքից դեպի Էջմիածին-Մարգարա մայրուղի տանող համայնքի վարչական տարածքում արագաչափի տեղադրում	5460.0

11	Համայնքապետարանի , մշակույթի տան, մանկապարտեզի և դպրոցի հարակից տարածքների կանաչապատում	800.0
12	Մշակույթի տանը բացել նոր խմբակներ, որոնք կնպաստեն ազգային արժեքների պահպանմանը	1000.0
13	Համայնքի գլխավոր հատակագծի գծագրում	4000.0
ԸՆԴԱՄԵՆԸ		648.660

9. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Աղյուսակ Համայնքի 2014-2015թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	Մուտքերի անվանումը	2014թ. փաստ.	2015թ. նախատ.	2015թ. փաստ.	2016թ. նախատ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	32263.9	35743.6	38050.7	35843.5	35356.5	35306.5	35306.5	35296.5	35296.5
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	32263.9	35743.6	38050.7	35843.5	35356.5	35306.5	35306.5	35296.5	35296.5
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7764.8	6185.0	8550.6	6235.0	6255.0	6205.0	6205.0	6195.0	6195.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	4431.3	4085.0	4106.5	4085.0	4085.0	4055.0	4055.0	4045.0	4045.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	1766.6	1750.0	1761.6	1750.0	1750.0	1720.0	1720.0	1710.0	1710.0
	Հողի հարկ	2664.7	2335.0	2344.9	2335.0	2335.0	2335.0	2335.0	2335.0	2335.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	3173.6	1900.0	4221.0	1950.0	1970.0	1950.0	1950.0	1950.0	1950.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	3173.6	1900.0	4221.0	1950.0	1970.0	1950.0	1950.0	1950.0	1950.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ									
	Տեղական տուրքեր	159.9	200.0	223.1	200.0	200.0	200.0	200.0	200.0	200.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ									

	Պետական տուրքեր									
1.5	Այլ հարկային եկամուտներ									
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ									
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ									
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	24118.3	29098.6	29098.6	29098.6	28611.5	28611.5	28611.5	28611.5	28611.5
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ									
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ									
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ									
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	24006.1	26969.4	26969.4	28611.5	28611.5	28611.5	28611.5	28611.5	28611.5
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	112.2	2129.2	2129.2	487.1	0	0	0	0	0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)									

դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ									
2.4	**Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**									
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)									
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ									
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	290.5	360.0	376.4	410.0	390.0	390.0	390.0	390.0	390.0
3.1	Տոկոսներ									
3.2	Շահաբաժիններ									
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	-	150.0	155.3	200.0	180.0	180.0	180.0	180.0	180.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	**290.5**	**210.0**	**221.1**	**210.0**	**210.0**	**210.0**	**210.0**	**210.0**	**210.0**
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ									
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման									

	իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ									
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր									
3.4	**Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում**									
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ									
3.5	**Վարչական գանձումներ**									
	Տեղական վճարներ	-	100.0	10.1	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ									
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ	-	-			-	-	-	-	-
3.6	**Մուտքեր տույժերից, տուգանքներից**									

	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ									
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից									
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ									
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ									
3.9	Այլ եկամուտներ*	90.3	-	15.0	-	-	-	-	-	-
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր									
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր									
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	90.3	0	15.0	0	0	0	0	0	0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)									
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր									
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր									
	Շարժական գույքի իրացումից մուտքեր									
	Այլ հիմնական միջոցների իրացումից									

	մուտքեր									
2.	Պաշարների իրացումից մուտքեր									
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր									
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր									
	Հողի իրացումից մուտքեր									
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր									
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)									
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)									
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ									
1.1	Արժեթղթեր									
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր									
	-հիմնական գումարի մարում									
1.2	Վարկեր									
	-վարկերի ստացում									
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում									
1.3	Փոխատվություններ									
	-բյուջետային փոխատվությունների ստացում									

	-ստացված փոխատվությունների գումարի մարում									
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ									
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն									
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր									
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր									
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում									
2.2	Փոխատվություններ									
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր									
	-փոխատվությունների տրամադրում									
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը									
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի									

10.ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓԱՓԱԳԻՐ՝ ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ

Աղյուսակ 6

Հ/Հ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ	ԾՐԱԳՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԸ	ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ /հազ.դրամ/	ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ					ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ			
					2017	2018	2019	2020	2021	Համայնքի բյուջե	Դոնոր կազմ-ներ	Պետական բյուջե	ՀՈԱԿ և այլն
1	Աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	Աշխատող	9 մարդ	5827.5	1165.5	1165.5	1165.5	1165.5	1165.5	5827.5			
2	Համայնքի ՀՈԱԿ-ների պահպանում	Աշխատող	14 մարդ	4337.3	867.5	867.5	867.5	867.5	867.5	4337.3			
3	Համայնքում կանաչապատ զբոսայգու կառուցում		0.2հա	3000,0	3000.0	0	0	0	0	3000.0	0	0	0
4	Համայնքապետարանի շենքի 2-րդ հարկի վերանորոգում		100քմ	4000.0	0	0	200.0	2000.0	0	4000.0			
5	Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների		2 կմ	120000,0	40000.0	40000.0	40000.0	0	0	0	0	120000.0	

	ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս									
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս									
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում									
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը									
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ									
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ									
1.1	Արժեթղթեր									
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր									
	-հիմնական գումարի մարում									
1.2	Վարկեր									
	-վարկերի ստացում									
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում									
1.3	Փոխատվություններ									
	-փոխատվությունների ստացում									
	-ստացված փոխատվությունների գումարի մարում									

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

	ասֆալտապատում												
6	Համայնքապետարան ի, մշակույթի տան հարակից տարածքների ասֆալտապատում		0.3կմ	18000.0			18000.0	0	0	0	0	18000.0	
7	Մշակույթի տան գույքի ձեռք բերում			2500.0	0	0	1000.0	1000.0	500.0	2500.0			
8	Մանկապարտեզի տարածքում խաղահրապարակի կառուցում.	Երեխա	300քմ	1200.0	600.0	600.0	0	0	0	1200.0	0	0	0
9	Մանկապարտեզը վերագինել գույքով	Երեխա		2500.0			1500.0	1000.0	0	2500.0			
10	Խմելու ջրի գլխավոր ջրագծի վերանորոգում 20% /տարեկան/	Բնակի չ	2000քմ	5000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	5000.0			
11	Կոյուղագծի խողովակների վերանորոգում		800մ	1200.0	0	0	0	600.0	600.0	1200.0			
12	Դպրոցի շենքի	Աշակե ղտ		480000.0	160000.0	160000.0	160000.0	0	0	0	0	480000.0	

	վերանորոգում												
13	Համայնքից դեպի Էջմիածին-Մարգարա մայրուղի տանող համայնքի վարչական տարածքում արագաչափի տեղադրում		1	5460.0	5460.0	0	0	0	0	0	0	5460.0	
14	Համայնքապետարանի , մշակույթի տան, մանկապարտեզի և դպրոցի հարակից տարածքների կանաչապատում		0.3հա	800.0	0	300.0	300.0	200.0	800.0				
15	Մշակույթի տանը բացել նոր խմբակներ, որոնք կնպաստեն ազգային արժեքների պահպանմանը	Երևխա	100	1000.0	400.0	300.0	300.0		1000.0				
16	Համայնքի գլխավոր հատակագծի գծագրում			4000.0	0	4000.0						4000.0	
17													

11.ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ՀՀՋԾ-ՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՈՒՂՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 1

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

Ծրագրի նպատակը	Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը և մատուցել հանրային որակյալ ծառայություն					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	5827.5 /հինգ միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	1165.5	1165.5	1165.5	1165.5	1165.5	1165.5
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Բարձրացնել սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և բարելավել բնակիչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Ծրագրի նպատակը	Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության ապահովում , կրթության հասանելիության ընդլայնում և մշակութային ծրագրերի իրականացում					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	4337.3 /չորս միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	867.5	867.5	867.5	867.5	867.5	867.5
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Բարձրացնել նախադպրոցական տարիքի երեխաների կրթական և ճանաչողական մակարդակը , համայնքի մշակութային կյանքի, որակի բարելավում և զարգացում					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 4

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ 2-ՐԴ ՀԱՐԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի նպատակը	Համայնքապետարանի վարչական շենքի 2-րդ հարկի 100 քմ տարածքի բարեկարգում					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	4000.0 /չորս միլիոն / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	0	0	2000.0	2000.0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Համայնքապետարանի շենքի 2-րդ հարկի վերանորոգում, որը կօգտագործվի որպես մանկական խմբակների կամ երիտասարդների ժամանցի կենտրոն. :					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 3

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՆԱՉԱՊԱՏ ՋԲՈՍԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի նպատակը	Համայնքում ստեղծել 0.2 հա հանգստի կանաչապատ գոտի					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	3000.0 /երեք միլիոն / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	3000.0	0	0	0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Համայնքի տարածքում ունենալ կանաչապատ հանգստի գոտի					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 5

ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Ծրագրի նպատակը	2 կմ երկարությամբ անբարեկարգ փողոցները բերել բարեկարգ վիճակի					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	120000.0 /մեկ հարյուր քսան միլիոն / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	40000.0	40000.0	40000.0	0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Պետական բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Համայնքում վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնել անցանելի ու հարմարավետ տրանսպորտային միջոցների երթևեկության և հետնիոտնային շարժի համար:					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 6

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԾՔՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Ծրագրի նպատակը	0.3 կմ տարածքի ասֆալտապատում					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	120000.0 /մեկ հարյուր քսան միլիոն / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	40000.0	40000.0	40000.0	0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Պետական բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Համայնքապետարնի և համայնքապետարանի հարակից տարածքների ասֆալտապատման արդյունքում կունենանք բարեկարգ և մաքուր տարածքներ:					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 7

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Ծրագրի նպատակը	Մշակույթի տունը կահավորել նստարաններով,ձեռք բերել բարձրախոսներ , ձայնային սարքեր					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	2500.0 /երկու միլին հիգ հարյուր հազար / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	0	0	1000.0	100.0	500.0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Մշակույթի տանը կազմակերպվող միջոցառումները կանցկացվեն ավելի բարձր որակով, հանդիսատեսը հնարավորություն կունենա դիտելու համայնքի բազմաշնորհ երեխաների ելույթները :					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 8

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի նպատակը	Մանկապարտեզի տարածքում կառուցել 300քմ տարածք զբաղեցնող հրապարակ					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	1200.0 /մեկ միլիոն երկու հարյուր հազար / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	600.0	600.0	0	0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Մանկապարտեզի երեխաների հետ պարապմունքներն կանցկացվեն ոչ միայն շենքային պայմաններում, այլ նաև խաղահրապարակում, երեխաների օրը ավելի կհետաքրքրանա:					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 9

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ ՎԵՐԱՁԻՆԵԼ ԳՈՒՅՔՈՎ

Ծրագրի նպատակը	Մանկապարտեզի համար ձեռք բերել նոր գույք					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	2500.0 /երկու միլիոն հինգ հարյուր հազար / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	0	0	1500.0	1000.0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Մանկապարտեզի հիմնական միջոցները կհամալրվեն նոր գույքով:					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 10

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՋՐԱԳԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի նպատակը	Բնակչությանը մատակարվող ջրի որակը բարձրացնել:					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	5000.0 /հինգ միլիոն / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	857.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Տարեկան 20 %-ով կբարելավվեն խմելու ջրի գլխավոր ջրագծի խողովակները:					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 11

ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի նպատակը	Նորացնել 800քմ կոյուղագծի խողովակները, հետագա խնդիրներից խուսափելու համար:					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	1200.0 /միլիոն երկու հարյուր ազար / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	0	0	0	600.0	600.0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Կբարեկարգվի համայնքի կոյուղագծի խողովակաշարը:					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 12

ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի նպատակը	Համայնքում կառուցել տիպային դպրոցի շենք:					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	480000.0 /չորս հարյուր ութսուն միլիոն / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	160000.0	160000.0	16000.0	0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Պետական բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Համայնքում ունենալով նոր դպրոցական շենք, կբարձրանա ուսուցման որակը, կրթական մակարդակը և կլուծվի համայնքի բնակչությանը տարիներ շարունակ հուզող գլխավոր հիմնախնդիրը:					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 13

ՀԱՄԱՅՆՔԻՑ ԴԵՊԻ ԷՋՄԻԱԾԻՆ- ՄԱՐԳԱՐԱ ՄԱՅՈՒՂԻ ՏԱՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐԱԳԱՉԱՓԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ծրագրի նպատակը	Համայնքում խուսափել ավտոճանապարհատրանսպորտային պատահարներից					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	5460.0 /հինգ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	5460.0	0	0	0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Պետական բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Համայնքում կկարգավորվեն երթևեկության կանոնները՝ հետագա դժբախտ պատահարներից խուսափելու համար :					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 14

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ՝ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

Ծրագրի նպատակը	Համայնքում կանաչապատ տարածքների հիմնում և պահպանում					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	800.0 /ութ հարյուր հազար / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	0	300.0	300.0	200.0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Համայնքը կունենա 0.3 հա կանաչապատ տարածք, որը կնպաստի օդի էկոլոգիապես մաքրմանը :					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 15

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ ԲԱՑԵԼ ՆՈՐ ԽՄԲԱԿՆԵՐ

Ծրագրի նպատակը	Դպրոցական տարիքի երեխաների արտադպրոցական դաստիարակության ապահովում , նրանց կրթական և դաստիարակության մակարդակի բարձրացում:					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	1000.0 /մեկ միլիոն / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	400.0	300.0	300.0	0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Համայնքի բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Համայնքում ապահովել արտադպրոցական դաստիարակության հասանելիությունը , որը կնպաստի ազգային արժեքների պահպանմանը :					

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 16

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԳԾԱԳՐՈՒՄ

Ծրագրի նպատակը	Ձեռք բերել համայնքի գլխավոր քաղաքաշինական փաստաթուղթը					
Ծրագրի ընդհանուր արժեքը /տառերով հազ.դրամ/	4000.0 /չորս միլիոն / դրամ					
Ծրագրի իրականացման ժամանակացույց	2016թ փաստացի	2017 կանխ.	2018 կանխ.	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
	0	0	4000.0	0	0	0
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Պետական բյուջե					
Ծրագրի ակնկալվող արդյունքները	Գլխավոր հատակագծի միջոցով կարտահայտվի համայնքի վարչական տարածքի համալիր նկարագիրը :					

12. ՀՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլաղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Ջրարբի համայնքի ՀՀԶԾ-Ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 6-ում:

13. ՀՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինների կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ 7 *-ում* ներկայացված է ՀՀԶԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

14. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՀՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ զարգացման ցանկալի տեսլականին: ՀՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀՀԶԾ-ի ներքին վերահսկողությանարդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ իգիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնք իավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀՀԶԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀՀԶԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀօրենսդրությամբ սահմանված կարգով: